**Արձանագրություն N 2**

**<<ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/1>> ծածկագրով Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի հանրակացարանային նոր մասնաշենքի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան

29.03.2019թ.
ժամը 11:30

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ա. Միրզոյան |
| Հանձնաժողովի անդամներ ՝ | Ռ. Եղիազարյան |
| | Ա. Գրիգորյան |
| | Ֆ. Սարգսյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Տ. Վասիլյան |
| Բացակայում էր՝ | |
| Հանձնաժողովի անդամ՝ | Գ. Գևորգյան |

**1. <<ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/1>> ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների մասին**

---

(Ա.Միրզոյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ.

ա) Գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2019 թվականի մարտի 25-ին, ժամը 11:30-ին:

բ) Գնման առարկայի նախահաշվային արժեքը կազմում է 752 828 273 (յոթ հարյուր հիսուներկու միլիոն ութ հարյուր քսանութ հազար երկու հարյուր յոթանասուներեք) ՀՀ դրամ:

գ) Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

*ՀՀ դրամ*

| Հ/Հ | *Մասնակցի անվանումը* | *Հասցե* | *Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի գումարը)* | *ԱԱՀ* | *Առաջարկված ընդհանուր գինը* |
|---|---|---|---|---|---|
| 1 | <<Արիովշին>> ՍՊԸ | ք. Երևան, Արշակունյաց պող., 48/2 շ.,բն. 3: | 455,750,000 | 91,150,000 | 546,900,000 |
| 2 | <<Ղարաբաղցյան-շին >> ՍՊԸ | ք. Երևան, Ազատության նրբ. 5 շ. 11 բն | 470,245,417.6 | 94,049,083.52 | 564,294,501.1 |
| 3 | <<Գազկոմշին>> ՍՊԸ | ՀՀ ք. Երևան,Նոր Նորքի 9-րդ զ-ծ 20/53 | 497,700,000 | 99,540,000 | 597,240,000 |
| 4 | <<Բաղրամյանշին>> ԲԲԸ | ՀՀ Արմավիրի մարզ, ք. Լեռնագոգ | 499,944,050 | 99,988,810 | 599,932,860 |
| 5 | <<Մեծն Էրիկ>> ՍՊԸ | ք. Գյումրի, Խորենացի 60/1 | 539,291,720 | 107,858,340 | 647,150,060 |
| 6 | <<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ | ք. Գավառ, Անդրանիկի 5 | 540,150,000 | 108,030,000 | 648,180,000 |
| 7 | <<Տրանսունիվերսալ>> ՓԲԸ | ի/հ ք.Եղվարդ, Երևանյան փ.10, գ/հ. ք.Երևան, Զավարյան փ.13/1 | 548,000,000 | 109,600,000 | 657,600,000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 8 | <<ԱԳԱԹ-777>> ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Շիրակի փակուղի 4 | 564,100,000 | 112,820,000 | 676,920,000 |
| 9 | <<Բիդեք>> ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Սասունցի Դավիթ 87ա | 580,415,000 | 116,083,000 | 696,498,000 |

դ) Ներկայացված փաստաթղթերն ուսումնասիրելու նպատակով հանձնաժողովը կասեցրել է 25.03.2019թ. նիստը և որոշել հաջորդ նիստը հրավիրել մինչև հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

ե) Գնման ընթացակարգի մասնակիցների հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ

1) <<Ղարաբաղցյան-շին >> ՍՊԸ-ի ներկայացրած բոլոր փաստաթղթերը (այդ թվում գնային առաջարկի հավելվածը) հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ինչպես նաև Հավելված 4-ի աղյուսակի 3-րդ և 4-րդ սյուներում նշված արժեքների գումարը հավասար չէ 5-րդ սյան մեջ նշված արժեքին:

2) <<Բաղրամյանշին>> ԲԲԸ-ի կողմից որպես հայտի ապահովում ներկայացված բանկային երաշխիքի գործողության ժամկետը չի բավարարում հրավերով սահմանված առնվազն 90 աշխատանքային օրվա պահանջին, իսկ բենեֆիցիարի անվանման մեջ նշված է <<պետական>> բառը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:*

## 2. Տեղեկություններ <<ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-19/1>> ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի մասին

---

(Ա.Միրզոյան)

2.1 Հիմք ընդունելով ընթացակարգի մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովի կողմից էլեկտրոնային համակարգի միջոցով հայտերը գնահատվել են հետևյալ հերթականությամբ և հետևյալ կերպ

| *Մրցույթում զբաղեցրած տեղը* | *Մասնակցի անվանումը* | *Հայտի գնահատականը* |
|---|---|---|
| 1 | <<Արհովշին>> ՍՊԸ | բավարար |
| 2 | <<Գազկոմշին>> ՍՊԸ | բավարար |
| 3 | <<Մեծն Էրիկ>> ՍՊԸ | բավարար |
| 4 | <<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ | բավարար |
| 5 | <<Տրանսունիվերսալ>> ՓԲԸ | բավարար |
| 6 | <<ԱԳԱԹ-777>> ՍՊԸ | բավարար |
| 7 | <<Բիդեք>> ՍՊԸ | բավարար |
| - | <<Ղարաբաղցյան-շին >> ՍՊԸ | անբավարար |
| - | <<Բաղրամյանշին>> ԲԲԸ | անբավարար |

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:*

### 3. ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

---

(Ա. Միրզոյան)

3.1 Հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը՝ հանձնաժողովը որոշեց

ա) ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

բ) Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում

1) ուղեկցող գրությամբ ՀՀ քաղաքաշինության կոմիտե ներկայացնել հայտի ապահովման՝ բանկային երաշխիքի բնօրինակը,

2) էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ կներկայացվի հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:*

### 4. <<ՀՀՔԿ-ԲՄԱԾՁԲ-19/1>> ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

---

(Ա. Միրզոյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացնելու օրվանից հաշված մինչև տասն աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------------------------------- Ա. Միրզոյան

Անդամ՝ ---------------------------------- Ռ. Եղիազարյան

---------------------------------- Ա. Գրիգորյան

---------------------------------- Ֆ. Սարգսյան

Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղար՝ ---------------------------------- Տ. Վասիլյան